


Handwritten text on a small, rectangular piece of paper with rounded corners, placed on a green background. The text is written in cursive and reads: "Handwritten text" followed by "Handwritten text".

Handwritten text on a small, rectangular piece of paper with rounded corners, placed on a green background. The text is written in cursive and reads: "Handwritten text" followed by "Handwritten text".

Handwritten text on a small, rectangular piece of paper with rounded corners, placed on a green background. The text is written in cursive and reads: "Handwritten text".




1999



ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲՆԱՆ

Հունիս 1944

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ




ՅԳԳ-ԹԻՖԼԻՍ

ps

1899 p. 17 $\bar{x}$ -

8486



ቶኮኔሊኮህ

თიქ. გრუზ. იზდ. ტ—ვა. || *საქარაშ* ლრ. ჯრ. ზ'4.

1899

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Августа 1899 г.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

29. 977

4925-60

Արտատպւած «Մուրճ» ամսագրից
(Յաւելածնեցող)։

ԻՐ ՎԱՂԱՄԵՌԻ ԸՆԿԵՐՈՋ՝

Ուսանող ՅԱԿՈԲ ՄԱՆԱՍԵԱՆԻ յիշատակին

Ն Լ Ի Բ Ո Ւ Մ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

(Անմոռաց ընկերոջ)

I

Մեր հայրենի հովիտներին այս փնջիկը
կազմեցի,
Թարմ շերիմիդ, տանջւած ընկեր, ահա նւէր
բերեցի.
Հողակոյտիդ թող վարդ լինի իմ փնջիկը
բուրալից,—
Նա հիւսւած է սրտիդ մօտիկ ծաղիկներին՝
երգերից...
Բայց ո՞վ գիտէ, գուցէ վայ օր, որ փնջիկս
թառամի,
Յիշատակդ սրտիս խորքում... օ, նա երբէք
չի մեռնի...

1899 թ. Թեֆլիս.

Ա Ղ Օ Թ Ք

XX

Այն մի զմայլելի առաւօտ էր,
Երբ թռչուններ բունից իջնում,
Արշալոյսին ողջունելով՝
Աղօթք էին երկինք ուղղում:

—
Եւ տերեր հեզ ուռենու
Թեթև դողով մրմնջում էր.
Իբրև չրթունք միանձնունու,
Կարծես, նա էլ աղօթում էր:

—
Դեռ փայլում էր Արուսեակը—
Արշալուսեան այդ վեհ արքան,
Երբ ասողերն էլ վերջին աղօթք
Մրմնջացին ու չքացան...

Տէր, գոչեցի վշտից յուզւած,
Իմ աղօթքն էլ թող հասնի Գեղ,
Եւ մաղթանքս՝ սրտից այրւած
Ընդունիր իբր՝ մի ողջակէզ:

—
Եւ չրթունքս ահ ու դողով
Մէկի անունն էր չչնջում...
Ա՛խ, նա, ընկերս..., հառաչելով,
Տառապում էր վերջին շնչում... *):

Օգոստ. 20. 1890 թ.

Սլաւեանկա.

—
*) Ուսանող Յ. Մանասեան վախճանեց
մայիսի 23-ին, 1895 թ. Թոքալտից:

ՔՐԴԻ ՇՈՒՆԸ

(Մանկական յիշողութիւններէց)

Դաժան ձմեռայ օրերին դարձեալ
Բեզ եմ ես յիշում, ի՛մ մանուկ անցեալ,
Երբ տատս նստած քուրսոյ մօտ զւարթ՝
Գուլբա էր գործում, պատմում ինձ հէքեաթ.
Եւ ձիւնը փայլուն, հալածած բուքից,
Քուլաներով էր թափւում երկնքից.
Մեր բակի շունն էլ, իր բունը քաշւած,
Ձեան փաթիլները դիտում էր ապշած:
Ես ննջում էի քուրսոյ մօտ ձգւած,
Փափուկ վերմակը մինչ կուրծքս քաշած,
Եւ ինչ երազներ, ցնորքներ անմեղ
Չէին զրդըռում իմ մանուկ ուղեղ...
Յանկարծ սթափւում, աչքերս բացում,
Տեսնում եմ տատիս—մլերն է չարժում:

Շիկնած թշերով պարկում եմ նորից,
Էլ չեմ վախենում վատ երազներից—
Պառաւր ինձ մօտ, անվերջ, անընդհատ
Շարունակում է կարծես իր հէքեաթ...

* * *

Բայց ահա յանկարծ մի չարագոյժ ձայն
Լսւում է դրսից—բուլի է նման.
Մերթ մեղմ, բարակ, մերթ խիստ փրփրում,
Կարծես այդ ժամին սիրտս քրքրում...
(Այդ մեր կատուն էր, նոր եմ հասկանում,
Իր հարեանի հետըն էր կուռւում
Եւ ցանկապատից նախանձ-թշնամուն՝
ձանկերով զինւած, գլորել ջանում):
—Տատիկ, ճշում եմ, այն ո՞վ է ունում,
Կարծես նա գաղտուկ ինձ է մօտենում...
—«Քնիր, բալա ջան, թաղնւիր շուտով,
Քուրդի Շունըն է իրա լակոտով...»
(Այսպէս էր տատս ինձ պատասխանում,
Որ չը խանգարեմ գուլբա գործելուն):
Բայց մեր չար կատուն, մոխրագոյն Շամօն,
Իր պատերազմն էր տաք շարունակում,

Եւ էլ գիշատիչ ելեէջներով,
Զարհուրանք ազդող կրքով փրփրում,
Վախլուկ, մանկական սիրտս բրբրում...

* *

—Տատիկ, վախում եմ ես Քրդի Շանից,
Տես, մօտենում է... ահա իմ կրծքից
Նա կպաւ յանկարծ... բուկս է ճնշում
Եւ քուրսու տակից ինձ ուժով քաշում:
—«Սնւս արա, բալաս, դէ, բաւական է,
Սնւս, թէ չէ, Շունը կը գայ քեզ տանէ...»
Եւ տատիս ազդից սիրտս բաբախում
Լեղապատառ է լինում, նըւաղում:
Նայում է տատս—դէմքս է գունատ,
Վճռում է, որ ինձ կպել է ն ի աթ.
Ու գրկում է ինձ, մերթ խաչակնքում,
Քթի տակ ինչ-որ աղօթք մըմնջում,
Մինչ ես շնչարգել, կծկըւած վախից,
Նորա գրկի մէջ մարում եմ անից...

Այդ մանուկ, անմեղ ժամանակներից
Քանի տարիներ սահել են անցել,
Բայց այն «Քրդի Շան» ձայնը անուրից
Յիշողութիւնիցս դեռ չէ գնացել,
Եւ մինչ այսօր էլ անունը քրդի
Չեմ կարում յիշել առանց զայրոյթի:

Նոյեմբ. 18. 1894 թ.

Թեֆլիս.

ՈՒՒՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

(Օր. Մ... Ա...-էն)

Թող ճակտիցդ մի վարդ պոկեմ—
Սիրոյ համբոյր —յիշատակ,
Թող նորանով ուխտս կնքեմ,
Ուխտս անարատ ու չիտակ:

Նորա շնչով ոգևորեմ—
Տոկամ կեանքի պայքարին,
Նորա բոյրով թող տոգորեմ—
Սիրեմ ցաւը թշւառին:

Թող այդ վարդը կրծքիս ասլէ
Եւ անթառամ և անվերջ,

Թող նա հոգի ինձ ներշնչէ՝
Անվախ կուեմ կեանքի մէջ...

Թող, թող պոկեմ ես այդ վարդը,
Նորան թաղեմ սրտումս,
Եւ, միշտ նորա բոյրն զգալով,
Յիշեմ ուխտն ու երգումս:

Հոկտ. 16. 1893 թ.

Թեֆլիս.

*
* *

Սոխակը ծիւ, ծիւ մղկըտաց, լացեց —
Ու լեզուն բացւեց.
Վարդի կոկոնը քնից սթափւեց —
Ու կուրծքը բացեց:


Առուն հեալով, հողը չերտելով,
Իր ուղին հարթեց
Նւ, ծաղիկներին հեռւից տեսնելով,
Վազեց-համբուրեց:

Իջաւ անձրևը, զովացան ծառեր
Նորա չիթերով.

Հողը երաշտած իր տապը մարեց,
«Ուխտան» անելով:

Նրգիչը միայն մէն-մենակ մնաց
Հետ իր քնարին,
Նորա նազելին անտարբեր մնաց
Սիրոյ երգերին...

1895 թ. Թիֆլիս.



ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԵՅՐԱԹ

(Նւէր հայ «ըհեստաւորներէն»)

Դեռ թոթովախօս մի մանուկ էի
Նւ եօթ տարեկան անգամ չը կայի,
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս՝
Մի սրբազան խօսք — և դա էր «նամուս»:

Դպրոցի չէմքին դեռ ոտ չը դըրած՝
Դեռ նոր էի գիրք ես ձեռքս առած,
Երբ մօրս համբոյր թրջեց իմ ճակատ
Ու պատուիրեց ինձ անել միշտ «ղէյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում,
Աղքատի բախտը դէ՛ ինչ է լինում...

Հօրս պատւերով սորվեցի արհեստ,
Սիրեցի նորա վաստակը համեստ:

Նւ այն օրից յետ,
Երբ ընկերացայ մուրճ ու սալի հետ —
Քրտինքը դէմքէս ծորում է կաթ-կաթ
Ու ինձ յիշեցնում նամուս ու զէյրաթ:
Միշտ նամուս-ղէյրաթ:

Հոկտ. 1. 1895 թ.

Թեֆլիս.

Տ Ի Ր Ո Ջ Ս Կ Ի Հ Հ

(Լեզենդա)

Ֆրուգէց

Ասան ինձ, մայրիկ, ճշմարիտ է այն,
Ինչ-որ պապիկը այսօր ինձ ասաց
Իբրեւ երկնքում սկիհն անազին
Աստծոյ գահին առաջ կայ դրած,
Եւ ամեն անգամ որեւէ հարւած
Երբ մեզ է հասնում անխիղճ մարդկանցից,
Այդ սկիհն մէջ արցունք է կաթում
Վշտահար Տիրոջ տխուր աչքերից.
Իբրեւ, երբ լցւի սկիհն արցունքով,
Այն ժամանակը միայն Մեսիան
Կիջնի երկնքից,

Նա, Որի փառքը սրբազործւում է
Աղօթքներէ մէջ,

Նա, Որին այսքան դար սպասում է

Մեր ամբոխը խեղճ,

Նորա յոյսերին չի լինում մի վերջ...

—Այո, զաւակս, ճշմարիտ է այդ—

Մայրիկը տխուր պատասխան տւեց:

Ու լուեց որդին... Խորհում էր անթարթ...

Բայց շուտով մօրը նորից հարցրեց.

—Ասան, մայրիկ ջան, բայց երբ կը լինի,

Որ այդ սկիհն մինչ բերան լցւի:

Գուցէ նորա մէջ արցունքն է ցամքում

Յաւիտեան, դուցէ... Նա յատմիկ չունի:

Եւ քնքոյշ դէմքով ու լի հեղութեամբ

Նա իր աչերը մանկան պարզութեամբ

Իր մօրն ուղղեց,

Մինչ սա գլխակոր և անպատասխան

Մանուկին թողեց,

Եւ միայն լուիկ մի կաթիլ արցունք

Յանկարծ թաց արաւ նորա թերթերունք:

—

Այդ ջերմ կաթիլը նման գոհարին՝

Փայլելով դիպաւ մանկան զանգուրին

Ու թաւալեւոյ ճակատին մարեց:

«Օ՛ վշտի Աստուած», մայրը հառաչեց.

«Թո՛ղ այս արցունքն էլ գլորւի Գո խեղճ
Սուրբ սկիհի մէջ»:

ԹԻՖԼԻՍ. 1897 թ.

ՀԱՅ ԱՂԶԿԱՆ

Սրտիս խորքում մի կոկոն-վարդ
Վաղուց ունիմ խնամած.

Արի՛, պոկի՛ր, սիրուն աղջիկ,
Քեզ համար եմ ես սահած:

Գիտե՞ս արդեօք, քանի հողմեր
Անցան նորա վրայով
Եւ վշտերի փոթորիկներ
Սալառնացան սև մահով:

Բայց մանկական իմ խնամքով
Նա սրտիս մէջ ամրացած,

Աչքերիս ցօղ արտասուքով
Իր արմատն է ուռճացած:

Դէ, հայ աղջիկ, արի շուտով,
Կոկոն-վարդիկա եղիւր տէր.
Թո՛ղ, որ սիրոյդ ճառագայթով
Բացւին նորա ար-թերթեր:

ጥቅምት. 1895 ዓ.ም.

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԱ

Ունում էր Բողար, ողբում էր Բողար,
 դունչը ցցելով,
 Եւ այնքան տխուր, սիրտը քրքրող
 ելեէջներով,
 Որ տառա՝ ահա ողջ երկրագունդը
 միջից կը պայթի,
 Կամ Նէուր իջած՝ համայն աշխարհը
 պիտի խորտակի:

Նուում էր Բողար, զառամեալ ու խուլ,
մղկըրտան ձայնով,
Ունում սիրտ ճմլող, յուսահատական
եղևէջներով.

Գերեզմանային սարսուռ էր ազդում
հարևաններին
Գիւղական խաւար, համր գիշերւայ
լուութեան ժամին:

—
Եւ Օհան ապին իւր շան ոռնումից
նախապաշարած՝
Մահ է գուշակում — մահւան ժանիքներ
մթնի մէջ շարած:
— Խնթուն, ասում է, այս վատ նշան է,
մօտ եմ օրհասին.
Բօթարեր ձայնից սիրտս է դողում,
խեղճ իմ ամուսին:

— «Նրբ շունը ոռնայ»,
Կ'ասէր իմ հէրը,
«Պիտի մահանայ
Քիւլֆատի տէրը...»

Ոռնում էր Բօղար, նւում էր Բօղար,
Թաւալում անդօր,
Խեղճ Օհան ապին մտատանջելով
մաշւում օրէց-օր:
Թշառը ահից ընկաւ անկողին,
այն էր որ պառկեց:
Եւ մի քանի օր... ու մի երեկոյ
հոգին աւանդեց:

—
Լուսացաւ օրը. մի անշուք դագաղ
գիւղից դուրս տարին,
Շատ փորձանք բերեց գիւղացոյց համար
զուլճւմ այս տարին...

Օգոստ. 25. 1898 թ.

Թիֆլիս.

ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ

Երբ խորադնին հայեացքս լարած
Նայում եմ մաշւած, գունատ սլատկերիդ
Եւ այդ գրաւիչ դէմքիդ գծերում
Տեսնում թաղնւած կլամար ժըպիտ.

Երբ քո աչերը հեռուն դիտելիս
Մի վերջին ոյժով փայլում են յանկարծ,
Եւ կամ խոնջացած վշտերի բոլից
Գաղտնի մրմունջով մարում մեղամաղձ.—

Ես միշտ յիշում եմ արեկոծ ծովը՝
Նոր հանգիստ առած անդուստլ փոթորկից,

Ես յիշում եմ այն մեղմ ակիքները,
Որոնք ժպտում են աշնան արեգից:

Եւ դժւք, սև աչեր, մի՛ օր վառվառն,
Իսկ այժմ տանջւած յուսախաբ սէրից,
Ինձ յիշեցնում էք ծովը անդորրուն,
Յաղթւած, զսպւած ահեղ փոթորկից...

Հոկտեմբ. 17, 1894 թ.

Թեֆլիս.

Գ Ա Ռ Ն Ժ Ա Մ Ի Ն

Եթէ լացը քեզ չէ օգնում,
Արի՛ մօտս, իմ ընկեր,
Փաղաքչելով քեզ իմ երգում՝
Կը խնամեմ քո վերքեր:

Եւ կը շոյեմ սիրակարօտ
Քո թախծալի ճակատը...
Անգին ընկեր, արի՛ ինձ մօտ,
Մեզ փրկի՛՜ յոյս-հաւատը...

Մարտի 25. 1895 թ.

Թեֆլիս.

ԳԵՂՋՈՒԿԻ ՎԱԽԸ

Բիւր ցաւերիս բերիւր նոր ցաւ,
Ա՛յ չարագոյժ դձու սև ագռաւ.
Տաղնապալից նեղ օրերի
Շարքը մի՞թէ դեռ չի անցաւ...

Թէ ծագի օր, դու մի նոր բօթ
Պիտի դուժես սրտիս ցաւոտ.
Կռաւոցդ մինչ երբ տևի,
Դէ՛հ ի՛նչ անեմ, չունիւս ամօթ:

Էդ անիծւած, չար լաղաբդ
Կատարւում է հէնց էլ շատ շուտ.

Մէկ էլ տեսար արտս տարաւ
Կամ մորեխը, կամ թէ կարկուտ:

Բիւր ցաւերիս բերիլը նոր ցաւ,
Ա՛յ անամօթ, դու նենգ աղուաւ.
Մտածում եմ... սև օրերի
Շարքը արդեօք դեռ չի անցաւ...

Յուլիսի 18. 1899 թ.

Թէֆլիս.

ԳԱՐՆԱՆ ՄՕՏԻՆԵՐ

I

Նորից բուրեց շունչը գարնան
Եւ յիշեցրեց քաղցր օրեր.
Կաշկանդանքից դաժան ձմրան
Ազատւեցան հոգոյս լարեր:

Սիրոն գարուն, ինչ լաւ հիւր ես
Իմ ցաւատանջ սրտի համար.
Երկամ արդեօք խոստանում ես
Ջիւան ջանիս նոր արե տալ...

II

Նս տանջւում եմ քո քրքիջով,
Ծիծառ անմեղ և սիրուն,
Նրբ բնութեան մանուկ շնչով
Աւետում ես մեզ դարուն:

Իբրև աղնիւ, անխոնջ մշակ,
Նորոգում ես քո բունը,
Ձագեր խնամում, հանում աշխարհ,
Ու օրհներգում դարունը:

Իսկ ես, նայիր, քանի՛ տարի
Նրդ երգեցի անընդհատ,
Հակատագրիս բողոք արի —
Չը բացւեց ինձ դարուն-վարդ:

Նւ իմ բոյնը այս աշխարհում
Դեռ մնում է աւերած,
Նւ բիրտ կեանքի անեղ կուռում
Նս մի հիւլէ հալածւած...

Ասա, ծիծառ, ինչո՞ւ անմեղ
Քո քրքիջով մանկական
Նս տանջւում եմ... կեանքն էլ չքեղ
Թւում է ինձ գերեզման...

Թիֆլիս, 1898 թ.

Բ Ի Է Ր Ն Ս Օ Ն Ի Ց

I

Կանաչ տերևով ծառը ծածկըւեց,
 Եւ կոկոններով քնքոյշ հագնըւեց.
 Կենսատու ցօղով մարգարտանման
 Ուռճանում էր նա շնչովը դարնան:
 Բայց նորա դալար շիւղերին մօտիկ
 Թագնւեց դաժան ծեր-սառնամանիք:
 — «Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, մանուկ կոկոններ.
 Չես տալ, տես, գօրով ինքս կը խըլեմ...»
 — «Ա՛խ, թողի՛ր հանգիստ իմ բողբոջներին,
 Նորա ծաղիկներ գոնէ բացւէին...»
 Սառնամանիքին ծառը շշնջաց
 Եւ ողջ էութեամբ արմատից դողաց:

* *

II

Եւ ահա կամաց-կամաց բացւեցան
 Անուշ բուրմուռքով դումաշ կոկոններ
 Եւ արեգակից ջերմ փայփայւեցան,
 Իսկ թռչունների անհոգ երամներ
 Հնչեցին ուրախ, սիրահար երգեր:
 Յանկարծ ծառի մօտ թռաւ չար քամին.
 — «Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,
 Կը յափշտակեմ թէ չէ այս ժամին...»
 — «Ա՛խ, խնայի՛ր ինձ և մի՛ արգելի՛ր
 Իմ ծաղիկներին պտղատու լինել...»
 Կատաղի քամուն ծառը շշնջաց
 Եւ սարսափելով վախից դողդողաց:

* *

III

Բայց ահա մատաղ ստուղներին խակ
 Զերմացրեց սիրով ամրան արեգակ,
 Եւ ծառը զուգուեց հասուն մրգերով:
 Մօտեցաւ նորան յուշիկ քայլերով,
 Հրաշալի կոյսը՝ տապիցը նեղւած.
 —Ա՛խ, տո՛ւր ինձ, ասաց, անուշիկ մրգեր,
 Զօրով չեմ խլիլ երեխայրէքներ...»
 —Ա՛ն քեզ, նազելի, ահա իմ ճղներ
 Քեզ են սպասում վաղուց անհամբեր,
 Որ գաս հեշտացնես նորանց ծանր բեռ...»
 Եւ ծառը սիրով նորան ողջունեց
 Ու խոնարհելով ճղները կախեց...

Դեկտ. 4, 1895 Թ.

ԹԻՓԼԵՍ.

ԷԼԻ ՆՈՐԱՆ

Այո՛, դո՛ւ էիր, որ արմատախիլ
 Արիւր իմ մատաղ կեանքի ծաղիկը,
 Դո՛ւ էիր, որ քո անմիտ վարմունքով
 Երգչիս դարձրիր քո խաղալիկը:

Եւ ուրախ էիր, որ քո գիւթական
 Քմահաճութեամբ մի սիրտ մաշեցիր.
 Դու յետ չը դարձար նայելու անգամ,
 Ո՛րչափ անողորմ ինձ հետ վարւեցիր:

Եւ ոչ ցաւեցիր, որ յամառ կամքով
 Քարուքանդ արիր սիրոյս աղբիւրներ,

Ուր ցայտում էին անդուստ հոսանքով
Ազնիւ ձգտումներ, սուրբ նպատակներ:

Ասան գոնէ այժմ, երբ պիտի մօտ գաս
Այս կորստաբեր ցաւից փրկելու,
Լուռ տանջւող երգչիս երբ պիտի յոյս
տաս
Մեր սիրոյ դաշն կրկին կապելու...

Օ՛, այն ժամանակ... եթէ իմանաս,
Որպէս պիտ' տօնեմ իմ վերածնութիւն,
Որպէս պիտ' գրկեմ սիրովդ ներշնչւած՝
Նոր կեանք խոստացող համայն բնու-
թիւն:

Յունւարի 15. 1894 թ.

Թէֆլիս.

ՀԻԱՍՔԱՓՈԻՄՆ

Խեղակորոյս հրապուրեցայ,
Քեզ կարծելով ազնիւ վարդ.
Ալ-այտելդ նուրբ, թաւիշեայ
Դուրս վանեցին սրտիս դարդ:

Ես ասացի. ինչ գեղեցիկ
Նա վառւում է հեռուից.
Օ, ինչ թովիչ, չքեղ փնջիկ
Պիտի կազմեմ նորանից:

Եւ չնչասպառ ու սիրատենչ
Սլացայ դէս՝ քեզ, կարմիր վարդ...
Բայց շատ ափսոս... տեսայ, ես ի՞նչ...
— Մի խաբուսիկ ժանդավարդ:

Մայիսի 25. 1894 թ.

Թէֆլիս.

ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ...

Հասկանում եմ, ինչու էիր
Ինձ հմայում, կաշկանդում
Եւ աչքերով սիրախօսուն
Սիրտս յուզում, բորբոքում:

Քեզ պէտք էր մի անգուսպ, մատաղ,
Զգացմունքով պատանի,
Որ նորա հետ խաղայիր խաղ,
Դատարկ սրտիդ նիւթ լինի:

Սովոր էիր անփորձ սրտեր
Գերել անյազ գրգիռով

Եւ այրելով, նորան նետել,
Մի ուրիշը փնտռելով:

Օ՛, հասկացայ, ինչու էիր
Ինձ հմայում, կաշկանդում
Եւ հեշտասէր վառ աչքերով
Սիրտս յուզում, բորբոքում:

Յունիսի 26. 1894 թ.

Թիֆլիս.

Գ Ե Օ Թ Է Ի Յ


(Բայրօնին)

... Մի լացիր այդպէս սգւորի նման,
Մենք նախանձում ենք փայլուն վիճակիդ:
Կապրէիր դու վեհ, բայց միշտ վշտահար,
Հպարտ երգերով տոգորւած հոգիդ:
Ա՛խ, ծնւած էիր դու բախտի համար,
Իբրեւ մի զաւակ հին փարթամութեան,
Բայց աւանդ, շատ վաղ հալ ու մաշ եղար
Ծաղիկ հասակում պատանեկութեան:
Քեզ լինչ էր պակաս... հայեանք թափանցիկ,
Սրտի ջերմութիւն, թէ կորովի միտք,
Կնոջ սիրելու ընդունակութիւն,
Խիզախ երգերի ստեղծագործութիւն:
Դու թռչում էիր անարգել թափով,
Հեռաւոր վայրեր ձեռքում-սլանում,

Դու ատում էիր խորին զգւանքով
Տիրող կարգերը իրենց օրէնքով.
Եւ ուժեղ միտքդ բարձր խոհերին,
Անբիժ զգացմանց ապաւինելով,
Դու ձգտում էիր դէպի երկնայինն,
Բայց ի զուր... Կեանքում նրանց չը գտար,
Եւ ո՛վ կը գտնի... Տխուր այս հարցին
Անողորմ կեանքը պատասխան չունի...:

Հոկա. 29. 1897 թ.

Թիֆլիս.



ՍԻՐՈՅ ԿԱՅԾԸ

Խաղաղ էի, անյոյզ էի,
Բորբոքեցիր ինձ յանկարծ.
Հանգստանալ հէնց կուզէի,
Դու վառեցիր սիրոյ կայծ:

Օ, թող օրհնւի այդ կայծը սուրբ,
Նորան թաղեմ իմ կրծքում
Եւ խնամեմ մըրկածուի
Սրտիս անմար մորմոտում,

Մինչև կը դաս, Կոյս Վեստալեան,
Հոգոյս տաճար կը մտնես,
Նրա մեհեանում դու յաւիտեան
Սիրոյ խունկը կը ծխես...

Թեֆլիս, 1895 թ.

ՆԱԴՍՈՆԻՑ

Ողջ էութեամբ քեզ պատկանել
Ես չեմ կարող, նազելի.
Ինձ յուզում են մյլ պատգամներ,
Ա՛յլ ցնորքներ խնկելի:

Եւ նոցանից ինձ անջատել,
Օ, չէ՛ն կարող քո գգւանք,
Ո՛չ հրատապ լուռ արցունքներ,
Ե՛ւ ոչ սիրոյ մի տանջանք:

Սիրելով քեզ, այն էլ գիտեմ,
Որ կեանքը չէ լոկ բերկրանք,

Եւ ես բողոք չարութեան դէմ
Դարձրի ինձ դաւանանք:

Եւ ահա նա ահեղ ձայնով
Մղում է ինձ պատերազմ,
Ես վարում եմ դէպ կեանքի ծով
Իմ մակոյկը ամրակազմ:

Թող նա ձեզքէ խօլ ալիքներ
Խաւարի հետ կռւելու,
Անհաւասար այդ կռւի մէջ
Լուսոյ կոթող կանգնելու:

Սեպտեմբ. 1. 1894 թ.

Թեֆլիս.

ԵՍ ԵՐԳԵՑԻ...

Ես երգեցի իմ մատաղ սէր՝
Մանուկ սրտիս սփոփանք,
Չեղաւ մէկը, որ ինձ լսէր
Եւ տար սիրոյս արձագանք:

Ես երգեցի մոռցւած մի երգ,
Նա մրմնջաց շատ սիրուն...
Արձագանքը նորա բեկբեկ
Թռւաւ, սլացաւ, շատ հեռուն...

Ա՛խ, այդ ձայնը մոռցւած երգի
Ապրում է միշտ իմ հոգում.
Էլ չեմ խփում սիրոյ լարին,—
Հայրենիքն եմ ես ողբում...

Մայիսի 13, 1896 թ.

Թեֆլիս.

ՊԱՏԿԵՐՆԵՐ

I

Դունապահ էր պանդուխտ Կարօն
Աղա-հարուստին,
Ցերեկները բակն էր հսկում,
Գիշերը—պագեզգիւն,
Եւ մուշտակը գլխին քաշած
Բաց երկնքի տակ,
Սրբրթալով քամուց-ձիւնից,
Պառկած էր մենակ:
Մայթի վրայ փողոցին կից
Կարծես քնած էր,
Վայ էր հալին... քունն էլ աչքից
Վաղուց փախած էր:
Եւ այն ժամին, երբ հարուստը
Տաք ննջարանում

Անուշ նիրհն էր իր վայելում,
Գանձեր երազում,
Խեղճ պանդուխտը ձիւն ու քամու
Տակ էր յօրանջում
Եւ Մարօին իր յիշելով,
Դառն հառաչում:
—«Եարմը Աստուած, մրմնջում էր,
Մինչ երբ այսպէս մնամ,
Արդեօք կը գայ մի օր, ես էլ
Իմ վաթան դառնամ»:

Յունւար 1, 1895 թ.

Թիֆլիս.

* *

II

Հառաչում էր խեղճ պանդուխտը
Թոքերի խորքից,
Նա դրժել էր իրա ուխտը —
Յետ կանգնել խօսքից:
Նշանածին խոստացել էր
Շուտ վերադառնալ,
Ռըսի հողում դեռ յոյս ունէր
Նա հարստանալ:
Ստեփան անցաւ քանի ամառ
Իբրեւ բեռնակիր,
Նա չը կրցաւ վերադառնալ
Իր սիրած երկիր:
Ու տանջւում էր ցերեկ-գիշեր,
Վայ տալով օրին,
Մի քիչ փարա գէթ վատտակէր —
Հասցնէր եարին:

Բայց իզուր ջանք... տարիքն անցան
Մէկ-մէկու ետքից,
Թշառը դեռ չազատեցաւ
Համետի տակից:
Եւ մի սև օր նա լուր առաւ,
Թէ իր Մարօին
Քրդի բէկը հարեմ տարաւ
Փոխարէն պարտքին:
Ե՛լ չը դիմցաւ խեղճ պանդուխտը
Այս դառն լուրին,
Կախեց կրծքից իր համետը
Զոհեց գլխի Գուռին:

Յոնւարի 1. 1895 թ.

Թեֆլիս.

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Երկրից-երկիր թափառելով,
Լեռներ, ձորեր պատառելով,
Հասանք այստեղ, հայ եղբայրներ.
Տւէ՛ք մեզի անկիւն մը չոր
Ցրտից-բուքից պատսպարւել,
Տւէ՛ք մեզի հաց մը կտոր
Սովալըլուկ մեր ջան պահել:
Կրած տանջանք, բիւր հալածանք,
Կին ու զաւակ թողած բախտին,
Մենք եկել ենք ձեր անունով,
Մենք յոյս կապել ձեր արեւին,—
Եղէ՛ք գոնէ դժուր մխիթար
Սփոփելու մեր օր վատթար:
Կորչելու է տուն ու վաթան,
Է՛լ մարդ չի մնաց մեր Հայաստան.

Նկանք պատմել, որ իմանաք,
Թէ մեր ցաւին չարին դարման...
Դէ, գոնէ դժուր մեզի խղճաք,
Օգնէ՛ք, «Երկիր» վերադառնանք...:

ԿԵԼՄ. 15. 1895 Թ.

ԹԵՖԼԵՍ.

ԱՅՍ ԱՆՄԻԽԹԱՐ ՍԳԻՈՐ ՕՐԵՐԻՆ

Այս անմխիթար սգւոր օրերին
Դու ինչ երգեցիր, սլօէտ, քո ազգին:
Մահից խուսափած անթիւ որբերին,
Որքան զոհեցիր, հարուստ, քո ոսկին:

Այս անմխիթար, սգւոր օրերին,
Հոգեւոր հայրեր, մեծ սփոփեցիք,
Կամ քանի՜ անգամ գաղթականներին
Դուք հաց տւեցիք—սլաւասպարեցիք:

Գարուններ անցան ու վերադարձան,
Ծիծառը եկաւ նորոգեց իր բոյն,

Բոլոր էակներ մուրադին հասան,
Կեանքի կարօտեց համայն բնութիւն:

Երգիչը միայն կախեց կրծքին քար,
Լռութեան մատնեց բողոքող քնար.
Հարուստը փակեց սնդուկի բերան,
Որ էլ չը լսէ թշուառի շիւան.
Հոգևոր հայրն էլ փակւած խուցի մէջ,
Ասլիկար ու ծոյլ նիրհում է անվերջ...

Հոկտեմբ. 20, 1896 թ.

Թէֆլիս.

Պ Ր Օ Մ Ե Թ Է Ո Ս Ի Ն

(Ֆբուդից)

Անհուն տանջանքը սեղմած իմ կրծքին՝
Ես դեռ լսում եմ քո հառաչն ու լաց,
Նայում ահռելի այն լերկ քարափին,
Ուր շղթաներով էիր կաշկանդւած:
Օ, Արամազդը անգուլթ էր, անխիղճ,
Անողոր իրա դատաստանի մէջ:
Բայց պահ մի լռիր, ո՛վ դու անմեղ զոհ
Վրէժխնդրութեան, ու լսիր և ինձ.
Չեմ յափշտակել ես Աստածանից
Անիրաւաբար սրբազան կրակ.
Նա ինքը տւեց Իրա կամքով ինձ,
Որ տանեմ վառեմ ամբոխի ճրագ.
Եւ այդ կրակը առանց տրիտուր
Չէ ինձ շնորհւած վերին պատգամից.

Արիւն արցունքովն իմ աղէկաւոր
Լոկ կարողացայ գնել Նորանից:
Եւ մինչ այսօր էլ կրակի-գնով
Վճարում եմ տուրքս արիւն-արցունքով.
Եւ ո՛չ թէ մի անգղ է ինձ գիշատում,
Այլ հարիւր անգղեր, բիւրաւոր օձեր
Իմ որբ, անսլաշտպան սիրտս են խայթում
Ու պատառոտում արիւնոտ վերքեր:
Օ, քո տառապանքդ կը լինի անհետ,
Թէ համեմատենք իմ կսկիծի հետ:

Յուլիսի 17. 1897 թ.

Թիֆլիս.

«ՁԱՐԴ ՏԱՆԵՄ»

(Մանկական յեշողութիւններէց)

Իմ նանը, բալէք, մի շատ լաւ կիւն էր,
Ժամ ու պատարագ նա շատ կը սիրէր.
Թէ արթնանալուց թէ քուն մտնելուց
Ինձ համար նա միշտ աղօթքներ կ'անէր,
Ինձ էլ աղօթքի իր հետ կը տանէր,
Ու թէ պատահէր՝ հիւանդանայի,
Կամ անակնկալ փորձանքի դայի,
Նա, գորովալից հոգատարութեամբ,
Կրծքին փարեւով, միշտ կը հարցնէր.
—«Ասա, բալիկս, ի՞նչդ կը ցաւի,
Ասա, դէ, նանը քո չարըդ տանի»:

Իմ խեղճ նանիկը իր ամբողջ կեանքում
«Ձարըս էր տանում», չէի հասկանում.
Ախ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,
Այնքան բարի էր, այնքան անձնւէր,
Որ վերջը, իրաւ, իմ «չարըս տարաւ»,
Սիրած բալիկին որբ, մենակ թողաւ:

Յուլիսի 27. 1899 թ.

Մանգլիս.

ՏԻԿԻՆ N N-ԻՆ

(Exprompto)

Ես չեմ նւիրում քեզ ոսկեգօծած
Թանգագին զարդեր,
Ո՛չ էլ թառամող, խնամքով փնջած
Մայիսեան վարդեր.
Չեմ նւիրում քեզ աչքեր գրաւող
Գոհարէ աղներ,
Որոց խափուսիկ ջուհարը չող-չող
Քո կրծքին փայլէր.
Այլ նւիրում եմ անմահ Բաֆֆիի
«Խէնթ-Չալալէդդին»,
Անա քեզ մի շարք փայլ գոհարների
Վէհ աշխարհ անդին.
Թող նորա լոյսը թափանցի քո կուրծք
Ապրելու յոյսով,

Դու առաջնորդւես նորա աստղերի
Կենսատու լոյսով,
Եւ այն աշխարհը, որին կոչում եմ
«Խէնթ-Չալալէդդին»—
Թողնել իբր աւանդ ես ցանկանում եմ
Գալոցդ սերնդին:

Մարտի 29. 1892 թ.

Բագու.

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԼՈՅՍ Է

Ֆրուգից

Եօթը տարիս նոր լրացած,
Ասաց մայրս հոգատար.
«Ռէ, զաւակս, ժամն է հասած
Պալրոց մտնել՝ գիրք կարդալ»:

Նոր-նոր շորեր ինձ հագցրին՝
Վայել աղիգ օրերի.
Վար ժապետին ինձ հասցրին —
Անունն էր Րէբ-Էլի *).

*) Րաբբի Եղիա

Նստացնելով, ձեռքս տըւին
Այբբենարան, որ կարդամ.
Փայփայելով խնդրում էին,
Որ տառերին անուն տամ:

—
Ես կարդացի տառերն կարգով,
Եւ չնորքիս փոխարէն՝
Առաստաղից ինչ-որ հրաշքով
Թափթփւում էր քաղցրեղէն:

—
Մինչ Րէբ-Էլին (լոյսը հոգուն)
Ասում էր ինձ հայրաբար.
— «Հրեշտակներն են այդ ուղարկում,
Որ դու սիրես միշտ կարդալ»:

* *

Օրեր, տարիք թևին տըւին,
Նկաւ ժամը տխրութեան.
Իմ անմոռաց վարժապետին
Մահը խլեց յաւիտեան:

Մահաւան վերջին հրաժեշտին
Նա ինձ թողեց այս պատգամ.
«Ուսիր, որդիս. գիտութիւնն է՝
Լոյս, կեանք և ոյժ մշտական»:

Այժմ հէնց որ ես ուզում եմ
Բացել գրքի մի էրես,
Քարէ-կարկուտ լոկ տեսնում եմ,
Թափթփում են իմ վրէժս:

Օ՛, ինչ շատ են, իմ Րէք-Էլի,
Այդ քարերը ինձ թռչում.
Ո՛վ է ձգում... միթէ էլի
Հրեշտակները...

... Ձէ լսում

Պառաւ Էլին: Խուլ, անբարբառ
Գերեզմանից ձայն չը կայ...
Շուրջս խաւար... ես ուժաստատ...
Բայց դեռ որքան ճամբայ կայ...:

1895 թ. Թիֆլիս.

Է Ս Ք Ի Ձ Ն Ե Ր

I

Գարնան խաբուսիկ փայլակի նման
Շատ փայլիլըեցիր կեանքիս կամարին,
Բայց վերջը մի չիթ անձրև չը բերիր
Այրւած, տոչորւած սրտիս ցաւերին...

II

Ա՛խ, այն դժու էիր, որ մույլ ժամին
Ներրուն հոգոյս ոյժ ներշնչեցիր.
Դարձար զօրավիգ սօէտի սրտին —
Յուսալ, հաւատալ վառ ապագային
Դու պատւիրեցիր.
Ա՛խ, այն դժու էիր, մուսայդ իմ անգին...

III

Օ՛, եթէ կարող լինէի, երկինք,
Մի շնչով հոգոյս ամբողջ փոթորիկ
Արտայայտելու,

Եւ կամ մի հուժկու խոր հառաչանքով
 Կուրծքս ճնշող սարն վայր գլորելու,
 Այնժամ ինձ մահը ծանր չէր թւալ,
 Եւ ոչ պժգալի նորա արհաւիրք,
 Զգալով հալած վշտին սարերը՝
 Հանդիստ կ'նետէի ես ինձ մահաւան գիրկ:



Տես, ինչպէս համեստ սահում է լուսին,
 Յրելով յամառ, խաւար ամպերը,
 Ինչպէս մտախոհ, հարթելով ուղին,
 Առաջ է տանում գոհար աստղերը:

Կ'ուզէի, ընկեր, որ լուսնի նման
 Անցնէիր և դձու քո փշոտ ուղին.
 Թո՛ղ որքան կուզեն փակեն քո ճամբան,
 Դձու, միշտ ջատագով գոհար մտքերին,
 Վէս իգէալին...:

Մարտի 29. 1896 թ.

Թիֆլիս.

Ռ Ո Ւ Բ Է Ն Ի Կ Ի Ս

Անմեղ դու մանուկ, ծաղիկ սիրաբոյր,
 Երկնից փնջածիդ տալիս ես համբոյր,
 Հոտոտում ես քեզ ու ասում «ջանիկ».—
 Միթէ դորանով ես դու երջանիկ:

Երբ գրկում եմ քեզ, օրօրում կրծքիս,
 Վիշտս է ցրւում, հրճւում է հոգիս.
 Քեզ երգ հիւսելով երգում եմ «նանիկ».—
 Միթէ դորանով ես դու երջանիկ:

Ամբողջ գիշերներ քունը վանելով՝
 Մայրիկդ է հսկում, կեանքը մաշելով.
 Լացիւ, նազանքիդ կ'ասէ նա «ջանիկ».—
 Միթէ դորանով ես դու երջանիկ:

Անցնում են անհոգ քո մանուկ օրեր,
Չեն գործում դեռ քո թաւիչ-թաթիկներ,
Ճակտիդ խաղում է դեռ քնոյ քրտինք.—
Այդ հանգիստ կեանքովն ես դու երջանիկ:

—
Ձէ, չէ, իմ հոգեակ, այդպէս չի մնալ
Քո մատաղ հասակ անհոգ ու հանգիստ.
Վշտի ու հոգսի կը բացւի օրը,
Մանուկ արեգ չի ժպտալ քեզ միշտ:

—
Բայց երբ մեծանաս, կեանքի մէջ մտնես,
Ճակատդ մի վեհ գործով պսակես,
Երբ նոր սերընդին իբրև յիշատակ
Անձնագործութեան դու տաս օրինակ,—

Ա՛յն ժամանակը, սիրուն Ռուբէնիկ,
Միայն կանւանեմ ես քեզ երջանիկ:

Մարտի 9. 1898 թ.

Թիֆլիս.

Դ Ի Մ Ա Կ Ն Ե Ր

Եւ էլի նորից տխուր պատկերներ
Շարւում են իմ դէմ, սրտացաւ ընկեր,
Երբ հարցնում ես դու՝ «ինչո՞ւ եմ մուսլ,
Վամ ինչո՞ւ եմ միշտ տխուր, վշտահար»:
Օ, մի՛ հարցնիլ, նորից մի՛ պեղիլ
Իմ հին վէրքերը դառն ու լեղի:
Ունէի և ես քո սրտի նման
Վարեկից ջերմ սիրտ, պարզ ու մանկական,
Եւ ինչ... չահամոլ, եսական մարդիկ
Իրենց օձային նենգամտութեամբ
Սողացին դէպ ինձ շողոքորթութեամբ
Եւ սրտիս խորքում փնտռելով կարիք
Շահադիտական սև միտումներով,
Սիրտս լքցրին կասկածի թոյնով:
Եւ ամեն անգամ իմ մատաղ հոգին
Դառն զայրոյթով սաստիկ է յուզւում,
Երբ ես տեսնում եմ, որ ագամորդին
Ժր վատ արարքից երբէք չէ զզւում...:

*
* *

Եւ այն ո՛վ գիտէր,
Որ օձը ցրտից խնամած, գրկած՝
Մի օր նենգաբար ինձ պիտի խայթէր.
Գիտէի միթէ, որ ձեռք մեկնէի

Նղբօրը ընկած—
Առաջին հարուածն ինձ պիտի ուղղէր
Եւ ամեն անգամ դալար յոյսերս
Ծաղկաթափ անէր, զգացմունք խլէր,
Տիրէր հաւատիս, ծաղրէր ջերմ սէրս,
Հարստահարէր:

* *

Ձէի իմանում, սիրելի ընկեր,
Որ կարեկցութեան, սիրոյ փոխանակ,
Թունալի մաղձով լկտի պարսաւանք
Իբրեւ վարձ՝ գաղտուկ գլխիս պիտ' ժայթքէր:
Եւ այս ասլիկար դաւաճանութիւն,
Յուդայի համբոյր, խաբեբայութիւն,
Բացագանչում ես, ճշմարիտն Աստուծոյ,
Ո՞ր մեղքիս համար էր ինձ ուղարկւած:

* *

Եւ չը հաւատաս,
Անփոքրձ իմ ընկեր. ես դեռ մարդկանց մէջ

Բարեկամ հոգի չը գտայ անկեղծ.
Այժմ բարեկամ անւան գիմակով
Նոյն բարեկամն է ծածուկ անկիւնից
Յարձակում վրադ սրած դանակով,
Աչքերն արնակոխ—կատաղած կրքից...
Ես ճանաչեցի նորա պատկերը.

Նա միշտ խօսում էր՝
Յանուն վեհ սիրոյ և ճշմարտութեան.

Բայց միշտ կեղծում էր՝

Իբրեւ մի հրէշ շողոքորթութեան.
Եւ Ֆէմիդայի երգում էր անւամբ,
Լոկ խօսքով աշխարհ թնդացնել ջանում,
Միամիտ, մաքուր ամբողջի որդուն
Օրօրում, շոյում հարախնդութեամբ
Եւ ստորաքարչ իրա գոյութիւն
Ամօթի ծաղրից նենգաբար ծածկում:
Ես ճանաչեցի նորա սեւ պատկեր.—
Ճանաչիր և դռն, սիրելի ընկեր.
Ու թէ կեանքի մէջ նա քեզ հանդիպի,
Ձգւիւր ու փախիւր այդպիսիներէց,
Որպէս ճամբորդը՝ սոսկալի իժից...

Թեֆլիս, 1897 թ.

Ա՛խ, ԻՄ ՍՐՏԻՆ...

Ա՛խ, իմ սրտին քանի՛ վերքեր, քանի՛ դաղեր
են դիպած,
Նորանց պահած սրտիս խորքում՝ թաղելու եմ
ստիպված.
Թէ պալարս միանգամից պատռւի յանկարծ
ու պայթի,
Ա՛խ, իմացէք, որ իմ վերքից բիւր ցաւերի,
տանջանքների
Անգուսպ հեղեղ պիտ' ժայթքի....:

Յունւարի 10. 1897 թ.

Թեֆլիս.

Ֆ Ր Ո Ւ Գ Ի Յ

Թռցրո՛ւ հոգիս դէպի այն հեռուն,
Ուր վայրն է դալար ընկած անսահման.
Նա մե՛ծ է, որպէս իմ վիշտը եռուն,
Որպէս իմ ցաւը անճար, անգուման:

Կը զարթնեն այնտեղ խաղաւած յոյսերս
եւ հաւատս ջերմ, անուշ յոյզերս,
Մենաւոր վայրում հեղեղի նման
Կը հոսան լռիկ ջերմ արցունքներս:

Սրտիս թելերին կը զարնեմ ամուր,
Կը հնչեն երգեր նորա վերքերից,
Եւ միանգամից խեղճ հոգիս՝ թափուր
Կը լինի ճնշող, մաշող հոգսերից:

Թռցրո՛ւ հոգիս այն չքնաղ հեռուն,
Ուր վայրն է դալար ընկած անսահման.
Նա մե՛ծ է, որպէս իմ վիշտը եռուն,
Որպէս իմ ցաւը անճար, անգուման:

1896 թ. Թեֆլիս.

ՀՈԳԵՄԱՇ ԹԱԽԻԾ...

Հոգեման թախիծ, սպանիչ մտքեր,
Ե՛լ թողէք հանգիստ զգայուն հոգիս.
Կեանքումս դոնէ մի անգամ երգեր
Ուրախ նւագել յաջողւի երգչիս:

Միշտ խոր հառաչանք, բողոքող ցաւեր
Մինչ ե՛րբ կը ծքիս տակ բոյն դրած մնան.
Թրթրւան սրտիս մղկտան լարեր
Ձեր հարւածներին մինչ ե՛րբ դիմանան:

Հոգեման թախիծ, սպանիչ վէրքեր,
Ե՛լ թողէք հանգիստ զգայուն հոգիս.

Կեանքումս դոնէ մի անգամ երգեր
Ուրախ նւագել յաջողւի երգչիս:

Մի ժամ, մի վայրկեան գէթ հանգստանամ,
Ընկղմեմ անհուն մոռացութեան մէջ,
Որ յետոյ նորից երգել կարենամ
Ե՛ւ սէրը կեանքի ե՛ս հաւատն անչէջ:

Մարտի 29, 1898 թ.

Թեֆլիս.

ՄԵՐ ՅԱԻԸ ՄԵԾ Է...

Մեր ցաւը մեծ է, մեր վիշտն անսահման,
Արի՛ բաժանենք իրար հետ, եղբայր.
Ե՛լ բաւ է լացենք վախկոտի նման,
Քանի մեր առաջ կայ այլ ճանապարհ:
Ե՛կ կուրծք-կրծքի տանք, որպէս ժայռերը,
Հեգնենք մեր գլխին ճայթող շանթերը.
Այսքան ողբալուց մաշւեց մեր հոգին,
Լացն էլ օգուտ չը բերաւ ազգին:
Մեր ցաւը մեծ է, մեր վիշտն անսպառ,
Արի՛, բաժանենք—սրտերս թեթևանար:

*
* *

Երբ մեր ամբոխն էլ մեզ պէս ցաւ ունի,
Ե՛կ նորա ցաւն էլ մեր սրտին առնենք,
Երկուսիս դարդը պէտք է մէկ լինի,
Ե՛կ նորա ցաւն էլ մեր ցաւին խառնենք:

Նորա հոգսերը տանք մեր քնարին,
Քնարը գտի՛ չարըն ու բարին.
Երգերի հրով բովենք, ամրացնենք,
Թշուառի սիրտը, լքեալի հոգին,
Տանջւած ամբոխին վերադարձնենք.
Թող նորա սիրտը նորից ամրանայ,
Գոնէ այդպիսով ցաւին դիմանայ...

*
* *

Մեր սիրտը լայն է, մեր հոգին տգիւտն,
Մի սպունգ ծծան—վշտերով լըռուն.
Ե՛կ տոկանք, տանենք ամբոխի ցաւը,
Մինչև կը հասնի աշխարհի լաւը.
Բայց քանի այսօր սրտի յոյզերը
Մեզ դէպի եռուն կեանքն են գոչում,
Քանի կարիքի ծանր հարցերը
Մեզնից շուտափոյթ լուծում պահանջում,
Ե՛կ, շուտով, եղբայր, առնենք քնարը
Ու մի նոր թափով շարժենք լարերը.
Վառ երգի հրով բովենք, դարբնենք

Թշուառի սիրտը, լքեալի հոգին,
Տանջւած ամբոխին դարձնենք կրկին.—
Թող նորա սիրտը ընդ միշտ ամրանայ,
Գալիք ցաւերին հեղնէ՛, գիմանայ....

1899 Թ. Թիֆլիս.



Յ Ա Ն Կ

Երես

1 Առաջաբանի տեղ I	7
2 Աղօթք II	8
3 Քրդի Շուներ	10
4 Ուխտ բարեկամութեան	14
5 * * Սոխակը ծիւ ծիւ	16
6 Նամուս ու ղէյրաթ	18
7 Ֆըռուքից—Տերոջ սկիւն	20
8 Հայ աղջկան	23
9 Գիւղական բալլադ	25
10 Փոթորիկից յետոյ	28
11 Դառն ժամին	30
12 Գեղջուկի վախը	31
13 Գարնան մօտիւներ I	33
14 „ Նստանքուս եմ II	34
15 Բիէլընսօնից	36
16 Էլի նորան	39
17 Հիասթափումս	41
18 Հասկանում եմ	42
19 Գեթիէց—(Բայրօնին)	44
20 Սերոյ կայծը	46
21 Նադսօնից	47
22 Ես երգեցի	49
23 Պատկերներ, Դառնապահ էր I	50
24 „ Հառաչում էր II	52
25 Գաղթականներ	54
26 Այս անմութար սղւոր օրերին	56
27 Ֆըռուքից—Պրօմէթէոսին	58
28 „Չարդ տանեմ“	60
29 Տիկին N N-ին	62
30 Ֆըռուքից—Գիտութիւնը լոյս է	64
31 Էսքիզներ I, II, III, IV	67
32 Ռուբէնիկիս	69
33 Դիմակներ	71
34 Ախ եմ սրտին	74
35 Ֆըռուքից—Թույրու Հոգիս	75
36 Հոգեմաշ թախիծ	76
37 Մեր ցաւը մեծ է	78

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Դիմել՝ Թիֆլիս.— Կենտրոնական գրավաճառանոց:

Բազու.— Նղբայրք Թառայեանցներէ գրավաճառանոց:

Գանձակ.— Վահան Բալիեանցին:

Կամ հեղինակին՝ *Тифлис. Соломахи,
Садовая № 50а.*

1992

ՀՀ Ազգային գրադարան



NL0240675

